ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2021/86

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

Մասնակից՝ «Մովսեսյան» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Գ. Երիցյանի, Ա. Հակոբյանի,

«Մովսեսյան» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Մովսեսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20» ծածկագրով գնանշման հարցում, համակարգիչների պատճենահանող սարքավորումների և սերվերների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 31.03.2021թ.-ի թիվ 26/26-1/4790-2021 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 25.03.2021թ.-ի թիվ Ե/40/727-21 գրության հիման վրա, 31.03.2021թ.-ին «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 31.03.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 31.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/86 համարի ծածկագիրը:

09.04.2021թ.-ին և 30.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 09.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.04.2021թ.-ին:

2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 25.03.2021թ.-ի թիվ Ե/40/727-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Գնորդ) կարիքների համար համակարգիչների, պատճենահանող սարքավորումների և սերվերների (այսուհետ՝ Ապրանք) ձեռքբերման նպատակով 22.12.2020թ-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, որը կազմակերպված է եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի, 6-րդ կետի, 1-ին մասի հիման վրա, «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021 թ-ի փետրվարի 5-ին կնքվել է N ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Ս/թ փետրվարի 23-ին Վաճառողին է ուղարկվել պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագրի նախագիծ, որի մեջ առկա են եղել մի շարք տեխնիկական վրիպակներ, այնուհետև 25.02.2021թ-ին ուղարկվել է վերը նշված համաձայնագրի շտկված տարբերակը:

15.03.2021թ-ին փոստային առաքման միջոցով ստացել ենք ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007 համաձայնագրի վաճառողի կողմից հաստատված երկու բնօրինակները, որոնցում առկա են եղել թերություններ՝

1) Համաձայնագրով հաստատվող վճարման ժամանակացույցի «Չափաբաժնի համարը» սյունակում նշված է 1 թիվը, որը պայմանագիր № ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007-ում գոյություն չունի:

2) Համաձայնագրով հաստատվող վճարման ժամանակացույցի «Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)» սյունակում նշված է 35121320 կոդը, որը պայմանագիր N2 ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007-ում գոյություն չունի:

3) Համաձայնագրով հաստատվող վճարման ժամանակացույցի «Ապրանքի անվանումը» սյունակում նշված է համակարգիչներ, պատճենահանող սարքավորումներ և սերվերներ, որը պայմանագիր № ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007-ում գոյություն չունի:

4) Համաձայնագրով հաստատվող վճարման ժամանակացույցի «Ընդհանուր գին» սյունակում նշված է 6085000 ՀՀ դրամ, որը պայմանագիր N2 ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007-ում գոյություն չունի:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն N2 Ե/40/647-21 առ 17.03.2021 թ գրությամբ վերը նշված թերություններով «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից վավերացված N ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007 համաձայնագրի բնօրինակները հետ է վերադարձրել՝ առաջարկելով շտկել թերությունները և սահմանված ժամկետում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հաստատմանը ներկայացնել շտկված համաձայնագիրը: Սակայն սահմանված ժամկետում շտկված համաձայնագրի բնօրինակները վաճառողի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ չի ներկայացվել:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մովսեսյան» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 06.04.2021թ.-ի թիվ Ե/40/836-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից ՍՅ-ԼՕ-2021/86 ընթացակարգի վերաբերյալ հայտնած կարծիքի ստորև ներկայացնում եմ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գրավոր դիրքորոշումը՝

«ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ի այն պնդմանը, թե «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն անհիմն կերպով, օրենքի խախտմամբ փոփոխել է գնումների 9-րդ պլանը հայտնում եմ Ձեզ, որ 9-րդ պլանի փոփոխությունը կատարվել է բացառապես օրենքի պահանջներին համապատասխան և պատվիրատուն պարտավոր չէ ֆինանսական միջոցներ հատկացվելու դեպքում միաժամանակ բոլոր չափաբաժինները մասով ուղարկել համաձայնագիր (ՀՀ կառավարության N 2 526-Ն որոշում 18-րդ կետ):

Գնումների 9-րդ պլանը փոփոխության է ենթարկվել հաշվի առնելով այն փաստը, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն մայիսի 15-ից 141 օրով կանգնում է պլանային նախապատրաստական վերանորոգման և նախատեսվում է մեծ ֆինանսական ծախսեր ինչի հետևանքով կատարվել է ֆինանսական բյուջեի վերաբաշխում, ինչը որևէ կապ չունի մասնակցի կողմից ներկայացրած այն փաստերի հետ, թե «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն անհիմն կերպով, օրենքի խախտմամբ փոփոխություններ է կատարել գնումների պլանում: Գնումների պլանի փոփոխությունը վերապահված է պատվիրատուի ղեկավարին և այս պահի դրությամբ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն իր անվտանգ շահագործման համար ունի առավել կարևոր ապրանքների ձեռքբերման անհրաժեշտություն:

Մեկ անգամ ևս փաստում և հիշեցնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն գործել է խստիվ պահպանելով «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր դրույթները, մասնավորապես՝

Ս/թ փետրվարի 23-ին Վաճառողին է ուղարկվել պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագրի նախագիծ, որի մեջ առկա են եղել մի շարք տեխնիկական վրիպակներ, այնուհետև 25.02.2021թ-ին ուղարկվել է վերընշված համաձայնագրի շտկված տարբերակը:

15.03.2021թ-ին փոստային առաքման միջոցով ստացել ենք ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007 համաձայնագրի վաճառողի կողմից հաստատված երկու բնօրինակները, որոնցում առկա են եղել թերություններ՝

1) Համաձայնագրով հաստատվող վճարման ժամանակացույցի «Չափաբաժնի համարը» սյունակում նշված է 1 թիվը, որը պայմանագիր № ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007-ում գոյություն չունի:

2) Համաձայնագրով հաստատվող վճարման ժամանակացույցի «Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)» սյունակում նշված է 35121320 կոդը, որը պայմանագիր № ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007-ում գոյություն չունի:

3) Համաձայնագրով հաստատվող վճարման ժամանակացույցի «Ապրանքի անվանումը» սյունակում նշված է համակարգիչներ, պատճենահանող սարքավորումներ և սերվերներ, որը պայմանագիր N 2 ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007-ում գոյություն չունի:

4) Համաձայնագրով հաստատվող վճարման ժամանակացույցի «Ընդհանուր գին» սյունակում նշված է 6085000 ՀՀ դրամ, որը պայմանագիր № ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007-ում գոյություն չունի:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն N2 E/40/647-21 առ 17.03.2021 թ գրությամբ վերը նշված թերություններով «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից վավերացված N ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007 համաձայնագրի բնօրինակները հետ է վերադարձրել՝ առաջարկելով շտկել թերությունները և սահմանված ժամկետում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հաստատմանը ներկայացնել շտկված համաձայնագիրը: Սակայն սահմանված ժամկետում շտկված համաձայնագրի բնօրինակները վաճառողի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ չի ներկայացվել:»:

Պատվիրատուն 14.04.2021թ.-ին ներկայացված թիվ E/40/919-21 գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ի հավելումն նախկինում մեր կողմից ներկայացված հիմնական դիրքորոշման և կատարելով «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ի ներկայացուցի կողմից սույն թվականի ապրիլի 9-ի նիստում հնչեցրած խնդրանքը՝ Ձեզ եմ ներկայացնում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գնումների 9-րդ պլանում խնդրի առարկա չափաբաժինների մասով ֆինանսավորման փոփոխության հետ կապված հավելյալ պարզաբանումներ:

Ինչպես արդեն նշվել էր մեր նախորդ դիրքորոշման մեջ, Հայկական ԱԷԿ-ում այս տարի երկարատև՝ 141 օր տևողությամբ աննախադեպ մեծ ծավալի վերանորոգման աշխատանքներ են նախատեսված, որոնց հիմնական մասը կատարվում է ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի շրջանակներում և ուղղված են անվտանգային կարևորագույն համակարգերի արդիականացմանն ու ՀԱԷԿ-ի շահագործման ռեսուրսի ավելացմանը: Սույն ծրագրի շրջանակներում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին 2020թ-ի հունիսի 11-ի N2 953-Ն որոշմամբ տրամադրվել է պետական բյուջետային վարկ, որի ֆինանսական հատկացումը 2021 թվականի համար նախատեսված 31,5 մլրդ ՀՀ դրամից կրճատվել է մինչև 25 մլրդ ՀՀ դրամ: Սույն հանգամանքից ելնելով էլ մեր ընկերությունն

ստիպված է եղել վերաբաշխել իր միջոցները՝ առաջացած բացը լրացնելու և առավել առաջնային նպատակներին ուղղելու համար:

Ասվածին անհրաժեշտ ենք համարում ավելացնել, որ մեր կողմից բոլոր ճշգրտումներն արված են եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով կազմակերպվող ընթացակարգի համար նախատեսված՝ պատվիրատուի կողմից լրացուցիչ համաձայնագիրը մասնակցին ուղարկելու 15-օրյա ժամկետի 2-րդ օրը, և մեր կարծիքով «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ն պարզապես չէր կարող այդ սեղմ ժամկետում պատվիրել պայմանագրով նախատեսված ապրանքը, առավել ևս երբ մասնակցի ներկայացուցիչը նիստի ընթացքում խոստովանեց, որ իրենք ուսումնասիրել են գնումների պլանում մեր կատարած փոփոխությունները այն բանից հետո միայն, երբ մենք նրան ուղարկել ենք պայմանագրի շտկված տարբերակը, այսինքն՝ մասնակիցը տփալ փոփոխություններին ծանոթացել է արդեն հետին թվով: Ոստի խնդրում ենք անարժանահավատ համարել «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ի այն պնդումը, թե վերջինս, առաջնորդվելով «ՀԱԷԿ» ՓԲԸ գնումների 9-րդ պլանով, պատվիրել է պայմանագրով նախատեսված ապրանքները: Եթե նույնիսկ մասնակիցը իրապես պատվիրել է խնդրո առարկա ապրանքը, բայց այլ հանգամանքներում, ապա դա համարում ենք վերջինիս ռիսկը, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով կազմակերպվող ընթացակարգի շրջանակներում պատվիրատուն չի պարտավորվում անպայման ձեռք բերել այդ ապրանքը:»:

3. <u>«Մովսեսյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 31.03.2021թ.-ին գրությամբ դիմել է «Մովսեսյան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.03.2021թ.-ի թիվ 26/26-1/4790-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

01.04.2021թ.-ի թիվ 2021-C402 գրությամբ ներկայացրել է գրավոր դիրքորոշում, հայտնելով հետևյալը.

««Մովսեսյան» ՍՊԸ-ն հայտնում է, որ ՀԱԷԿ ՓԲԸ կողմից ներկայացված այն պնդումը, որ Մովսեսյան ՍՊԸ-ն խախտել է գնումների գործընթացի շրջանակում իր

ստանձնած պարտավորությունները և չի կնքել համաձայնագիրը, չի համապատասխանում իրականությանը՝ հետևյալ հիմնավորումներից ելնելով.

1. 23.03.2021թ.-ին ՀԱԷԿ ՓԲԸ-ից ստացվել է 05.02.2021թ.-ին կնքված ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007 ծածկագրով պայմանագրի շրջանակում, դրա ամբողջ արժեքի՝ 6,085,000 ՀՀ դրամի համաձայնագիր կնքելու առաջարկ, որը առանց որևէ փոփոխության (բացառությամբ վավերապայմանների լրացման) Մովսեսյան ՍՊԸ կողմից կնքվել է և փոստային առաքմամբ ուղարկվել ՀԱԷԿ ՓԲԸ-ին:

2. 25.03.2021թ.-ին ՀԱԷԿ ՓԲԸ-ից ստացվել է Պայմանագրի միայն 4-րդ չափաբաժնի մասով՝ 1,635,000 ՀՀ դրամ արժողությամբ համաձայնագիր կնքելու, իսկ նախորդ ծանուցումը անտեսելու առաջարկ, ինչը Մովսեսյան ՍՊԸ-ի կողմից մերժվել է այն հիմքով, որ նախ՝ նշված գումարը չի համապատասխանում Պայմանագրի ամբողջ գումարին, և երկրորդ՝ 25.03.2021թ. ստացված համաձայնագիր կնքելու ծանուցումը չի համապատասխանել ՀԱԷԿ ՓԲԸ կողմից 22.02.2021թ.-ին, ժամը 14:44-ին հրապարակված՝ 2021թ. №9 գնումների պլանին, քանի որ նշված գնումների պլանով ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007 ծածկագրով պայմանագրի ֆինանսավորման համար նախատեսված ֆինանսական միջոցները կազմել են 6,085,000 ՀՀ դրամ:

Միաժամանակ 25.03.2021թ. ժամը 14:15-ին համաձայնագիր կնքելու երկրորդ ծանուցումը ստանալու պահին գործել է վերը նշված ՀԱԷԿ ՓԲԸ 2021թ. №9 գնումների պլանը, քանի որ ՀԱԷԿ ՓԲԸ 2021թ. №10 գնումների պլանը հրապարակվել է դրանից հետո՝ 25.03.2021թ.-ին, ժամը 16:24-ին:

3. Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 8-րդ կետի՝

Գնումներ կատարելու համար ֆինանսական միջոցներ նախատեսվում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման համար սահմանված համապատասխան հոդվածներով: Արգելվում է ֆինանսական միջոցներ նախատեսել բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այլ հոդվածներով, եթե այդ միջոցների հաշվին պետք է կատարվեն գնումներ:

4. Համադրելով վերը շարադրված իրողությունները, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրության բովանդակությունն ու մեջբերված օրենսդրական կարգավորումը, պարզ է դառնում, որ ՀԱԷԿ ՓԲԸ պաշտոնատար անձինք դիտավորյալ խեղաթյուրելով իրականությունը, փորձել են մոլորության մեջ գցել ՀՀ ֆինանսների նախարարությանը և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, քանի որ

ընթացակարգը նախաձեռնելիս ներկայացրել են խեղաթյուրված տեղեկատվություն, պնդելով որ տեխնիկական վրիպակ է եղել, որևէ բառ չասելով այն մասին, որ ՀԱԷԿ ՓԲԸ 2021թ. №9 գնումների պլանը անհիմն կերպով, օրենքի խախտմամբ փոփոխվել է, և դրանից հանվել են 05.02.2021թ.-ին կնքված ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007 ծածկագրով պայմանագրով կատարվելիք գնումների համար նախատեսված ֆինանսական միջոցները:

5. Վերոգրյալը հիմնավորվում է այն իրողությամբ, որ ՀԱԷԿ ՓԲԸ-ն 22.02.2021թ.-ին, ժամը 14:44-ին հրապարակել է 2021թ. №9 իր գնումների պլանը, որով Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով սահմանված կարգով, ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007 ծածկագրով պայմանագրի շրջանակում պետք է կատարվեին գնումներ: Սակայն, ՀԱԷԿ ՓԲԸ-ն խախտելով Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված օրենսդրական արգելքը, կնքված պայմանագիր ունենալու պայմաններում, անհիմն կերպով փոփոխություններ է կատարել իր 2021թ. №9 գնումների պլանում, այդ պլանից օրենքի խախտմամբ հանելով արդեն իսկ կնքված պայմանագրի համար նախատեսված ֆինանսական միջոցների զգալի մասը:

6. Մովսեսյան ՍՊԸ-ն բազմիցս առաջարկել է ՀԱԷԿ ՓԲԸ-ին, որպեսզի 25.03.2021թ-ին ուղարկված համաձայնագրի նախագիծը համապատասխանեցվի 2021թ. №9 գնումների պլանի հետ, սակայն տեսնելով, որ դա չի արվում, Մովսեսյան ՍՊԸ-ն ինքնուրույն այն համապատասխանեցրել է 2021թ. №9 գնումների պլանի հետ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստորագրել և սահմանված ժամկետում՝ ծանուցումը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ 19.03.2021թ.-ին էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված ձևով ներկայացրել ՀԱԷԿ ՓԲԸ-ին (քանի որ թղթային տարբերակով հնարավոր չեր լինի հասցնել):

7. Վերոգրյալ ամբողջից հետևում է, որ Մովսեսյան ՍՊԸ-ն չի խախտել գնումների գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն կամ կնքված պայմանագրի որևէ դրույթ, քանի որ սահմանված ժամկետում, երկու անգամ ծանուցումը ստանալուց հետո, կնքել և ՀԱԷԿ ՓԲԸ-ին է ներկայացրել Օրենքով նախատեսված համաձայնագրերը:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել իրականությանը չհամապատասխանող, խեղաթյուրված տեղեկատվություն, իսկ ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-ն չի խախտել գնումների գործընթացի շրջանակում ստանձնած, կամ պայմանագրային որևէ պարտավորություն, հետևաբար՝ ՍՑ-ԼՕ-2021/86 ընթացակարգը ենթակա է մերժման, իսկ 2021թ. №9 գնումների պլանին համապատասխանող համաձայնագիրը ենթակա է կնքման:»:

Մասնակիցի կողմից 14.04.2021թ.-ին ներկայացվել է թիվ 2021-C416 գրությունը, որով հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան ՀԱԷԿ ՓԲԸ լրացուցիչ գրության, հայտնում եմ հետևյալը.

Ինչպես երևում է գործի նյութերից, կցված ապացույցներից, Մովսեսյան ՍՊԸ-ն 6,085,000 ՀՀ դրամի համաձայնագիր կնքելու առաջարկը ստացել է 23.02.2021թ.-ին, իսկ ՀԱԷԿ ՓԲԸ-ի գնումների հ. 9 պլանը, ՀՀ ֆինանսների նախարարության www.gnumner.am կայքում հրապարակված է եղել 22.02.2021թ.-ից: Հետևաբար՝ պարզ է դառնում, որ Մովսեսյան ՍՊԸ-ն 23.02.2021թ-ին ստանալով համաձայնագիր կնքելու առաջարկ, և նույն օրը ծանոթանալով 22.02.2021թ-ին հրապարակված համար 9 գնումների պլանի հետ, եկել է այն տրամաբանական եզրահանգմանը, որ ՀԱԷԿ ՓԲԸ կողմից կնքված պայմանագրի վճարման համար նախատեսված ֆինանսական միջոցները կազմում են 6,085,000 ՀՀ դրամ, և դրաջորդ օրը՝ 24.02.2021թ.-ին, Paypal վճարային համակարգի միջոցով, կատարել է վճարում, և ձեռք է բերել պայմանագրով նախատեսված ծրագրային ապահովման լիցենզիաների զգալի մասը, ընդ որում, նշված ձեռքբերումը, որքան էլ զարմանալի կամ անհավատալի թվա ՀԱԷԿ ՓԲԸ-ի համար, տևել է ոչ ավել քան 20 րոպե, քանի որ այն կատարվել է ժամանակակից վճարային համակարգի միջոցով, էլեկտրոնային առևտուր իրականացնելու ձևով՝ լիցենզավորման կոդերը՝ Paypal վճարային համակարգի միջոցով գնելով: Նշված լիցենզավորման կոդերը վճարումը կատարելուց հետո՝ 15-20 րոպեների ընթացքում էՓ միջոցով ուղարվկել են Մովսեսյան ՍՊԸ-ին:

Ասվածից պարզ է դառնում, որ ՀԱԷԿ ՓԲԸ կողմից արտահայտված այն դիրքորոշումը, որ Մովսեսյան ՍՊԸ-ն հետին ամսաթվով ինչ-որ բաներ է արել, կամ որ իրենց կարծիքով Մովսեսյան ՍՊԸ-ն չեր կարող այդքան սեղմ ժամկետում ձեռք բերել ծրագրային ապահովման լիցենզիայի փաթեթներ, լիովին անտրամաբանական է և անհիմն:

Միաժամանակ հարկ եմ համարում ավելացնել, որ ՀԱԷԿ ՓԲԸ-ն սույն ընթացակարգի շրջանակում չի ներկայացրել որևէ իրավական հիմնավորում առ այն, որ կնքված պայմանագրի և ֆինանսական միջոցներ նախատեսված լինելու պայմաններում, փոփոխել է գնումների պլանը, հետևաբար՝ ՀԱԷԿ ՓԲԸ կողմից գնումների պլանի նման փոփոխությունը անհիմն է և չի բխում Գնումների մասին ՀՀ օրենքի պահանջներից, որոնց պարտավոր էր հետևել ՀԱԷԿ ՓԲԸ-ն:»:

4. <u>ՍՑ-LO-2021/86 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Մովսեսյան» ՍՊԸ-ի միջև 05.02.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (այսուհետ նաև՝ Հավելված 1) համաձայն՝ պայմանագրի առարկա է հանդիսանում սերվեր (4-րդ չափաբաժին) և ծրագիր (6-րդ և 7-րդ չափաբաժիններ) ապրանքները:

iii. Հավելված 1-ով սերվեր (4-րդ չափաբաժին) ապրանքի համար որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) նշվել է 4821200, իսկ ծրագիր (6-րդ և 7-րդ չափաբաժիններ) ապրանքների համար՝ 48781100:

iv. Հավելված 1-ով ապրանքների մատակարարման ժամկետի սկիզբ է համարվում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքվելի համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրվա ժամկետը:

v. Պայմանագրի 3.1-րդ կետի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 6 085 000 (վեց միլիոն ութսունհինգ հազար) ՀՀ դրամ:

vi. Պատվիրատուն 23.02.2021թ.-ին ներկայացված ծանուցմամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին ուղարկել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» ծածկագրով պետական գնման պայմանագրի կնքվելիք 1-01/007 համաձայնագրի (այսուհետ նաև՝ Համաձայնագիր 1) նախագիծը:

vii. Համաձայնագրի 1-ի 1-ին կետի համաձայն՝ Պայմանագրի 8.12-րդ կետի համապատասխան հաստատվել են ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն Հավելված 2-ի («ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2021թ.-ի գնումների 9-րդ փոփոխված պլան):

viii. Հավելված 2-ով սահմանված վճարման ժամանակացույցի համաձայն՝ որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) նշվել է 35121320, իսկ գումարը՝ 6 085 000 (վեց միլիոն ութսունհինգ հազար) ՀՀ դրամ:

ix. Պատվիրատուն 25.02.2021թ.-ին ներկայացված ծանուցմամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին կրկին ուղարկել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» ծածկագրով պետական

գնման պայմանագրի կնքվելիք 1-01/007 համաձայնագրի (այսուհետ նաև՝ Համաձայնագիր 2) նախագիծը:

x. Համաձայնագրի 2-ի 1-ին կետի համաձայն՝ Պայմանագրի 8.12-րդ կետի համապատասխան հաստատվել են ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն Հավելված 2-ի («ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2021թ.-ի գնումների 10-րդ փոփոխված պլան):

xi. Հավելված 2-ով սահմանված վճարման ժամանակացույցի համաձայն՝ սերվեր (4-րդ չափաբաժին) ապրանքի համար որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) նշվել է 4821200, իսկ գումարը՝ 1 635 000 ՀՀ դրամ:

xii. «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից, ի պատասխան Պատվիրատուի 23.02.2021թ.-ի ներկայացված համաձայնագիր կնքելու մասին ծանուցման, 15.03.2021թ.-ին ներկայացվել է համաձայնագիրը: Նույն համաձայնագրի Հավելված 2-ով՝ որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) նշվել է 35121320, իսկ գումարը՝ 6 085 000 (վեց միլիոն ութսունհինգ հազար) ՀՀ դրամ:

xiii. «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից, ի պատասխան Պատվիրատուի 25.02.2021թ.-ի ներկայացված համաձայնագիր կնքելու մասին ծանուցման, 19.03.2021թ.-ին ներկայացվել է համաձայնագիրը: Նույն համաձայնագրի Հավելված 2-ով սերվեր (4-րդ չափաբաժին) ապրանքի համար որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) նշվել է 4821200, իսկ գումարը՝ 1 635 000 ՀՀ դրամ, ծրագիր (6-րդ չափաբաժին) ապրանքի համար նշվել է 48781100, իսկ գումար՝ 3 725 000 ՀՀ դրամ և ծրագիր (7-րդ չափաբաժին) ապրանքի համար նշվել է՝ 48781100, իսկ գումար 725 000 ՀՀ դրամ:

xiv. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 23.03.2021թ.-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանի լուծման մասին 23.03.2021թ.-ի թիվ Ε/40/709-21 ծանուցման համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար համակարգիչների, պատճենահանող սարքավորումների և սերվերների ձեռքբերման նպատակով 22.12.2020թ.-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, որը կազմակերպված է եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-

րդ կետի 1-ին մասի հիման վրա, «Մովսեսյան» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ.-ի փետրվարի 5-ին կնքվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» ծածկագրով պայմանագիրը:

Ս/թ փետրվարի 23-ին Մասնակցին է ուղարկվել համաձայնագրի նախագիծ, որի մեջ առկա են եղել մի շարք տեխնիկական վրիպակներ, այնուհետև 25.02.2021թ.-ին ուղարկվել է վերը նշված համաձայնագրի շտկված տարբերակը:

15.03.2021թ.-ին փոստային առաքման միջոցով ստացել ենք «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» համաձայնագրի՝ Մասնակցի կողմից հաստատված երկու բնօրինակները, որոնցում առկա են եղել թերություններ՝

1) Համաձայնագրով հաստատվող վճարման ժամանակացույցի համաձայն՝ չափաբաժնի համարը սյունակում նշված է 1 թիվը, որը «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» պայմանագրում գոյություն չունի:

2) Համաձայնագրով հաստատվող վճարման ժամանակացույցի համաձայն՝ գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) սյունակում նշված է 35121320 կոդը, որը «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» պայմանագրում գոյություն չունի:

3) Համաձայնագրով հաստատվող վճարման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի անվանումը սյունակում նշված է համակարգիչներ, պատճենահանող սարքավորումներ և սերվերներ, որը «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» պայմանագրում գոյություն չունի:

4) Համաձայնագրով հաստատվող վճարման ժամանակացույցի համաձայն՝ ընդհանուր գին սյունակում նշված է 6085000 ՀՀ դրամ, որը «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» պայմանագրում գոյություն չունի:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն 17.03.2021թ.-ին թիվ Ε/40/647-21 գրությամբ վերը նշված թերություններով Մասնակցի կողմից վավերացված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» համաձայնագրի բնօրինակները հետ է վերադարձրել, առաջարկելով շտկել թերությունները և սահմանված ժամկետում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հաստատմանը ներկայացնել շտկված համաձայնագիրը: Սակայն սահմանված ժամկետում շտկված համաձայնագրերի բնօրինակները «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն չի ստացվել:

Պայմանագրի 8.12-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ

նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Միաժամանակ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով «Մովսեսյան» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ.-ի փետրվարի 5-ին կնքված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» պայմանագրի վերոգրյալ դրույթը և վերը նշված փաստերը՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն մասնակի միակողմանի լուծում է «Մովսեսյան» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև կնքված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» պայմանագիրը՝ 4-րդ չափաբաժնի մասով:

xv. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 22.02.2021թ.-ին հաստատված և www.gnumner.am կայքում հրապարակված գնումների պլանով՝ սերվեր ապրանքի համար որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 48821200, քանակը՝ 1, գնման ընթացակարգի տեսակ՝ գնանշման հարցում, գումարը՝ 1 635 000, չափման միավորը՝ լրակազմ, ծրագիր MS-SQL 2016 ապրանքի համար որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 48781100, քանակը՝ 5, գնման ընթացակարգի տեսակ՝ գնանշման հարցում, գումարը՝ 3 725 000, չափման միավորը՝ լրակազմ և ծրագիր Microsoft Windows server 2016 ապրանքի համար որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 48781100, քանակը՝ 1, գնման ընթացակարգի տեսակ՝ գնանշման հարցում, գումարը՝ 725 000, չափման միավորը՝ հատ:

xvi. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 25.02.2021թ.-ին հաստատված և www.gnumner.am կայքում հրապարակված գնումների պլանով՝ սերվեր ապրանքի համար որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 48821200, քանակը՝ 1, գնման ընթացակարգի տեսակ՝ գնանշման հարցում, գումարը՝ 1 635 000, չափման միավորը՝ լրակազմ, ծրագիր MS-SQL 2016 ապրանքի համար որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 48781100, քանակը՝ 0, գնման ընթացակարգի տեսակ՝ գնանշման հարցում, գումարը՝ 0, չափման միավորը՝ լրակազմ և ծրագիր Microsoft Windows server 2016 ապրանքի համար որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 48781100, քանակը՝ 0, գնման ընթացակարգի տեսակ՝ գնանշման հարցում, գումարը՝ 0, չափման միավորը՝ հատ:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.03.2021թ.-ի թիվ 26/26-1/4790-2021 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա

ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Մովսեսյան» ՍՊԸ-ի միջև 05.02.2021թ.-ին կնքված թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» ծածկագրով պետական գնման պայմանագրի 8.12-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների

մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Վերոնշյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Ընդ որում, Կատարողը (Մասնակիցը) համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում:

Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Մովսեսյան» ՍՊԸ-ի միջև 05.02.2021թ.-ին կնքված թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ պայմանագրի առարկա է հանդիսանում սերվեր (4-րդ չափաբաժին) և ծրագիր (6-րդ և 7-րդ չափաբաժիններ) ապրանքները: Պայմանագրի Հավելված 1-ով սերվեր (4-րդ չափաբաժին) ապրանքի համար որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) նշվել է 4821200, իսկ ծրագիր (6-րդ և 7-րդ չափաբաժիններ) ապրանքների համար՝ 48781100, իսկ ապրանքների մատակարարման ժամկետի սկիզբ է համարվում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքվելի համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրվա ժամկետը: Նույն պայմանագրի 3.1-րդ կետի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 6 085 000 (վեց միլիոն ութսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Պատվիրատուն 23.02.2021թ.-ին ներկայացված ծանուցմամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին ուղարկել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» ծածկագրով պետական գնման պայմանագրի կնքվելիք 1-01/007 համաձայնագրի նախագիծը: Նույն Համաձայնագրի 1-ին կետի համաձայն՝ Պայմանագրի 8.12-րդ կետի համապատասխան հաստատվել են ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն Հավելված 2-ի («ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2021թ.-ի գնումների 9-րդ փոփոխված պլան): Հավելված 2-ով

սահմանված վճարման ժամանակացույցի համաձայն՝ որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) նշվել է 35121320, իսկ գումարը՝ 6 085 000 (վեց միլիոն ութսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Պատվիրատուն 25.02.2021թ.-ին ներկայացված ծանուցմամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին կրկին ուղարկել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» ծածկագրով պետական գնման պայմանագրի կնքվելիք 1-01/007 համաձայնագրի նախագիծը: Նույն Համաձայնագրի 1-ին կետի համաձայն՝ Պայմանագրի 8.12-րդ կետի համապատասխան հաստատվել են ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն Հավելված 2-ի («ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2021թ.-ի գնումների 10-րդ փոփոխված պլան): Հավելված 2-ով սահմանված վճարման ժամանակացույցի համաձայն՝ սերվեր (4-րդ չափաբաժին) ապրանքի համար որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) նշվել է 4821200, իսկ գումարը՝ 1 635 000 ՀՀ դրամ:

«Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից, ի պատասխան Պատվիրատուի 23.02.2021թ.-ի ներկայացված համաձայնագիր կնքելու մասին ծանուցման, 15.03.2021թ.-ին ներկայացվել է համաձայնագիրը: Նույն համաձայնագրի Հավելված 2-ով՝ որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) նշվել է 35121320, իսկ գումարը՝ 6 085 000 (վեց միլիոն ութսունհինգ հազար) ՀՀ դրամ:

«Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից, ի պատասխան Պատվիրատուի 25.02.2021թ.-ի ներկայացված համաձայնագիր կնքելու մասին ծանուցման, 19.03.2021թ.-ին ներկայացվել է համաձայնագիրը: Նույն համաձայնագրի Հավելված 2-ով սերվեր (4-րդ չափաբաժին) ապրանքի համար որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) նշվել է 4821200, իսկ գումարը՝ 1 635 000 ՀՀ դրամ, ծրագիր (6-րդ չափաբաժին) ապրանքի համար նշվել է 48781100, իսկ գումար՝ 3 725 000 ՀՀ դրամ և ծրագիր (7-րդ չափաբաժին) ապրանքի համար նշվել է՝ 48781100, իսկ գումար 725 000 ՀՀ դրամ:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 23.03.2021թ.-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանի լուծման մասին 23.03.2021թ.-ի թիվ Ε/40/709-21 ծանուցման համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար համակարգիչների, պատճենահանող սարքավորումների և սերվերների ձեռքբերման նպատակով 22.12.2020թ.-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20» ծածկագրով գնման ընթացակարգի

արդյունքում, որը կազմակերպված է եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի 1-ին մասի հիման վրա, «Մովսեսյան» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ.-ի փետրվարի 5-ին կնքվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» ծածկագրով պայմանագիրը:

Ս/թ փետրվարի 23-ին Մասնակցին է ուղարկվել համաձայնագրի նախագիծ, որի մեջ առկա են եղել մի շարք տեխնիկական վրիպակներ, այնուհետև 25.02.2021թ.-ին ուղարկվել է վերը նշված համաձայնագրի շտկված տարբերակը:

15.03.2021թ.-ին փոստային առաքման միջոցով ստացել ենք «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» համաձայնագրի՝ Մասնակցի կողմից հաստատված երկու բնօրինակները, որոնցում առկա են եղել թերություններ՝

1) Համաձայնագրով հաստատվող վճարման ժամանակացույցի համաձայն՝ չափաբաժնի համարը սյունակում նշված է 1 թիվը, որը «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» պայմանագրում գոյություն չունի:

2) Համաձայնագրով հաստատվող վճարման ժամանակացույցի համաձայն՝ գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) սյունակում նշված է 35121320 կոդը, որը «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» պայմանագրում գոյություն չունի:

3) Համաձայնագրով հաստատվող վճարման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի անվանումը սյունակում նշված է համակարգիչներ, պատճենահանող սարքավորումներ և սերվերներ, որը «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» պայմանագրում գոյություն չունի:

4) Համաձայնագրով հաստատվող վճարման ժամանակացույցի համաձայն՝ ընդհանուր գին սյունակում նշված է 6085000 ՀՀ դրամ, որը «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» պայմանագրում գոյություն չունի:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն 17.03.2021թ.-ին թիվ Է/40/647-21 գրությամբ վերը նշված թերություններով Մասնակցի կողմից վավերացված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» համաձայնագրի բնօրինակները հետ է վերադարձրել, առաջարկելով շտկել թերությունները և սահմանված ժամկետում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հաստատմանը ներկայացնել շտկված համաձայնագիրը: Սակայն սահմանված ժամկետում շտկված համաձայնագրերի բնօրինակները «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն չի ստացվել:

Պայմանագրի 8.12-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Միաժամանակ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով «Մովսեսյան» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ.-ի փետրվարի 5-ին կնքված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» պայմանագրի վերոգրյալ դրույթը և վերը նշված փաստերը՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն մասնակի միակողմանի լուծում է «Մովսեսյան» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև կնքված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20-01/007» պայմանագիրը՝ 4-րդ չափաբաժնի մասով:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 22.02.2021թ.-ին հաստատված և www.gnumner.am կայքում հրապարակված գնումների պլանով՝ սերվեր ապրանքի համար որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 48821200, քանակը՝ 1, գնման ընթացակարգի տեսակ՝ գնանշման հարցում, գումարը՝ 1 635 000, չափման միավորը՝ լրակազմ, ծրագիր MS-SQL 2016 ապրանքի համար որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 48781100, քանակը՝ 5, գնման ընթացակարգի տեսակ՝ գնանշման հարցում, գումարը՝ 3 725 000, չափման միավորը՝ լրակազմ և ծրագիր Microsoft Windows server 2016 ապրանքի համար որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 48781100, քանակը՝ 1, գնման ընթացակարգի տեսակ՝ գնանշման հարցում, գումարը՝ 725 000, չափման միավորը՝ հատ:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 25.02.2021թ.-ին հաստատված և www.gnumner.am կայքում հրապարակված գնումների պլանով՝ սերվեր ապրանքի համար որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 48821200, քանակը՝ 1, գնման ընթացակարգի տեսակ՝ գնանշման հարցում, գումարը՝ 1 635 000, չափման միավորը՝ լրակազմ, ծրագիր MS-SQL 2016 ապրանքի համար որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 48781100, քանակը՝ 0, գնման ընթացակարգի տեսակ՝ գնանշման հարցում, գումարը՝ 0, չափման միավորը՝ լրակազմ և ծրագիր Microsoft Windows server 2016 ապրանքի համար որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 48781100, քանակը՝ 0, գնման ընթացակարգի տեսակ՝ գնանշման հարցում, գումարը՝ 0, չափման միավորը՝ հատ:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Պատվիրատուի և Մասնակցի ներկայացրած դիրքորոշումների հանգամանքներին, ուսումնասիրելով գործով ձեռքբերված և հաստատված փաստերը՝

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ սույն դեպքում, Մասնակցի ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը տեղի է ունեցել Պատվիրատուի մեղքով, վերջինս է նպաստել Մասնակցի պարտավորություններն անպատշաճ կատարելուն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք

ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն*

ընդդեմ «Միլլար» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը):

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի կողմից գնման գործընթացում ստանձնած պարտավորությունն անպատշաճ կատարելը չի կարող հանգեցնել պատասխանատվության, քանի որ բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը: Մասնակիցը օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել դրանք հասցնել իրենց տրամաբանական ավարտին:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.03.2021թ.-ի թիվ 26/26-1/4790-2021 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/86 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**